

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անքիլիս - Լիբանան

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Քարեխնամ Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Ե Ր Ո Ւ Ս Ա Դ Է Մ

Ամեն. եւ Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Ս. Յարութեան հրաշափառ տօնին առքիւ կը փութանի
ներկայացնել Զերդ Ամենապատուութեան Մեր ջերմ շնորհաւորու-
թիւններն ու լաւագոյն մաղթանքները:

Մեր սրտալից աղօքքն է, որ Ս. Զատկի տօնը իր կրօնա-
կան ներշնչումներուն հետ միասին բերէ մեզի ազգային յարու-
թեան յոյսն ու հաւատքը:

Մնամ օրհնածայն սիրոյ ջերմ ողջունիւ

ԽՈՌԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
Կեդրոնական Վարչական Ժողով

Ապրիլ 4, 1977

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արք. Տերտելեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմի

Ամենապատիւ Սրբազն Հայր,

Մօս է Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը, որ մեր սրտերը կը լեցնէ վերածաղկումի եւ վերածնունդի բերկրալի ըգ-գացումներով:

Մեր ժողովուրդը, իբրև առաջին Քրիստոնեայ ժողովուրդ, կանուխէն կայք եւ աղօքարան հաստատեց Քրիստոսակոյն այն հոդին վրայ, ուր այսօր կը շարունակէ Զեր Պատրիարքական Սուրբ Արռողջ գործել, Նորին Ամենապատութեանդ իմաստուն առաջնորդութեամբ:

Սուրբ Զատկուան տօնին առիթով Երուսաղէմը ցնծութեան կրկնակ պատճառներ ունի՝ իբրեւ Քրիստոնեայ հաւատքի կեդրոն եւ իբրեւ հող որ Քրիստոսը ընդունեց:

Այս տօնական առիթով Զեզի կը մաղթենք երկար եւ արեւաշատ տարիներ, իսկ Սուրբ Արռողիդ՝ անսասանութիւն եւ յաջողութիւն:

Խորին յարգանօք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ